

Գիտական կաբինետի 2018թ. - ի հաշվետվություն

Հիմնադրման օրվանից սկսած՝ գիտական կաբինետի գործունեությունը միտված է օգնելու և սպասարկելու ՎՊՀ - ի դասախոսներին և բոլոր ստորաբաժանումների աշխատակիցներին, ովքեր հարկ կհամարեն օգտվել գիտական կաբինետից:

Աշխատանքային գործունեության և ուսումնառության գործընթացի հետ կապված՝ կաբինետն ունի << Գիտաժողովների հրավերներ >> - ի անկյուն, որտեղ պարբերաբար ներկայացվում են այլ բուհերում և նրանց կողմից անցկացվող, կազմակերպվող գիտաժողովների հրավերները, որպեսզի ուսանողների համար այն ավելի տեսանելի լինի:

2018թ -ին կաբինետը իրազեկել է գիտության ասպարեզում կատարվող նորությունների և հրատարակվող գիտական ամսագրերի, գրականության, էլեկտրոնային տարբեր շտեմարանների հասցեների մասին և ցուցել համապատասխան աղբյուրներ տրամադրել, ինչը պարբերաբար արվում է՝ կաբինետում գտնվող ստենդի վրա այդ նորությունների աղբյուրները նշելով:

Ուսումնառության ընթացքում հանձնարարված ռեֆերատները, կուրսային աշխատանքները, ավարտաճառերը գրելու համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ անխափան աշխատող համակարգիչներ և մշտական կապ ապահով համացանց: Համակարգիչները պարբերաբար մաքրվում են օգտվողների կողմից թողած ավելորդ, ժամկետանց թղթապանակներից և նյութերից, նկարներից:

Կաբինետը 2018թ. - ի ընթացքում կատարել է իր ևս մեկ գործառույթը: Ստացված ատենախոսությունները՝ ըստ մասնագիտացումների, գրանցվել են համապատասխան էլեկտրոնային թղթապանակներում և դասակարգվել ըստ տարիների: Դասախոսների կողմից՝ որպես ևս մեկ գրականության աղբյուր, նրանք տրամադրվում են ավարտաճառ գրող ուսանողներին, իսկ իրենց ոլորտում եղած մասնագիտական հետաքրքրության դեպքում՝ նաև դասախոսներին:

Կաբինետի վարիչ - Կարինե Ղազարյան